ԿՈՒՅՍԵՐԸ

Bookmark

ALEX MICHAELIDES

THE MAIDENS

Bookmark

ԱԼԵՔՍ ՍԱՅՔԼԻԴԻՍ

ԿՈՒՅԱԵՐԸ

Վեպ

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Աթաբեկյանի

ԵՐԵՎԱՆ
2021

Bookmark

ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

«Կույսերը»… մեկնակետը գայթակղիչ է, շարունակությունը՝ անդիմադրելի:

The New York Times

Սքանչելիորեն խորհրդավոր, նրբաճաշակ, անսահման գրավիչ վեպ: Շրջադարձն ուղղակի ցնցեց ինձ: Այս գիրքն ավելի շատ սիրեցի, քան «Լռակյաց հիվանդը». պատահական ոչինչ չի լինում:

Լյուսի Ֆոուլի, New York Times-ի «Հյուրերի ցուցակը» բեսթսելլերի հեղինակ

«Գաղտնի պատմության» երկրպագուները կսիրահարվեն «Կույսերին»: Շլացնող սյուժեով այս վեպը կրնկակոխ հետևում է 2019-ի բեսթսելլեր «Լռակյաց հիվանդին»: Այս վեպն իսկական մարտահրավեր է: Հունական դիցաբանության ու հնագույն ծիսական սպանությունների անհիրական թվացող բազմաշերտ հղումներով ինտելեկտուալ գրական գլուխգործոցն ամրապընդում է Մայքլիդիսի անհաղթահարելի ուժը թրիլլերի ժանրում:

Esquire

Նրբաճաշակ, չարագուշակ, ոճային ու գայթակղիչ. «Կույսերը» պատասխանում է մի ծանրակշիռ հարցի՝ ո՞ր վեպն է նախորդ տասնամյակի մեծագույն թրիլլերների արժանի հետնորդը: Այս գործը գերազանցում է իր նախորդներին:

Քրիս Ուայթերքեր, New York Times-ի «Սկսում ենք վերջից» բեսթսելլերի հեղինակ

Քննադատների բարձր գնահատականին արժանացած «Լռակյաց հիվանդը» վեպի հեղինակը ժամանակակից լավագույն գրողի իր դիրքն ամրապնդում է այս նոր գործով: Հունական դիցաբանությունն ու անսպասելի շրջադարձերը համադրված են այնպիսի վարպետությամբ և այնքան փայլուն, որ այս վեպն ուղղակի պետք է հայտնվի բեսթսելլերների ցանկում:

Newsweek

Այստեղ, ինչպես «Լռակյաց հիվանդը» վեպում (2019), ի հայտ են գալիս բեմադրիչ-ռեժիսոր Մայքլիդիսի հմտությունները. հերթական լարված սյուժեով ու հղկված շրջադարձերով հարուստ վեպը:

Booklist

Մայքլիդիսը միավորում է դիցաբանությունն ու հանցագործությունը՝ հյուսելով համոզիչ բեսթսելլեր:

Oprah Daily

Մայքլիդիսն ապացուցել է, որ կարող է հեղինակել մեկից ավելի հիթային վեպ: Նա շուտով կդառնա աշխարհի ամենաազդեցիկ ու ընթերցվող հեղինակը թրիլլերի ժանրում:

Bookreporter.com

Ապշեցնող է... Խելացի, ինտելեկտուալ սյուժեն ժամանակակից զուգահեռներ է հայտնաբերում Եվրիպիդեսի ողբերգություններում, յակոբինյան դրամաներում, օրինակ՝ «Մալֆիի դքսուհին» գործում, նաև Թենիսոնի պոեզիայում: Ամենակործան հանգուցալուծումը ցույց է տալիս, թե որքան քիչ բան

գիտի Մարիանան մարդու հոգեբանության կամ հենց իր մասին: Մայքլիդիսն անգերազանցելի է:

Publishers Weekly

Մանրամասն մտածված սյուժե ու հրաշալի ռիթմ. սա ինտելեկտուալ գրականություն է, ոգեշնչող երկրորդ վեպը:

The Observer

Անդիմադրելի, խորհրդավոր գիրք, որի էջերից անհնար է կտրվել. արյունը սառչում է երակներում, վեպն ընթերցողներին տանում է վախեցնող ու բեկումնային ուղևորության… Եթե հավանել եք «Լռակյաց հիվանդը», ապա արդեն գիտեք, որ Մայքլիդիսի նոր գիրքը հենց ձեզ համար է: Այս անդիմադրելի վեպը կստիպի մտածել, թե ո՞ր գիրքն եք ամենից շատ սիրում նույն ժանրի փայլուն գլուխգործոցների շարքում:

Pop Sugar

Ալեքս Մայքլիդիսի երկրորդ վեպը փայլուն հաջողություն գրանցեց: «Կույսերն» առաջնակարգ բեսթսելլեր է:

Դեյվիդ Բալդաչի

Այս գրավիչ, անսպասելի շրջադարձերով հեքիաթը, որում հունական դիցաբանությունը միահյուսված է ընթերցողի ակնկալիքներին, ամառային ընթերցանության կատարյալ տարբերակ է:

Book Riot

ՀՏԴ 821.111-312.4 Մայքլիդիս
ԳՄԴ 84(4Մբ)-44
Մ 230

Մ230 Մայքլիդիս Ալեքս
Կույսերը / Ա. Մայքլիդիս; Թարգմանությունն անգլերենից՝ Ա. Աթաբեկյանի.- Եր.: Newmag, 2021.- 448 էջ:

Էդվարդ Ֆոսկան մարդասպան է. Մարիանան կասկած անգամ չունի: Բայց Ֆոսկան անհասանելի է, անշոշափելի: Քեմբրիջի համալսարանի հունական ողբերգության բարետես ու խարիզմատիկ պրոֆեսոր Ֆոսկային պաշտում են և՛ դասախոսները, և՛ ուսանողները, հատկապես «Կույսեր» գաղտնի խմբի անդամները:

Մարիանա Անդրոսը փայլուն, բայց բարդ ու հակասական խմբային թերապևտ է: Նրա ուշադրությունը սևեռվում է «Կույսերի» վրա, երբ Քեմբրիջում գտնում են նրանցից մեկի՝ Մարիանայի զարմուհի Ջոուիի ընկերուհու մարմինը:

Մի ժամանակ Մարիանան նույն համալսարանում էր սովորում: Նա անմիջապես գլխի է ընկնում, որ սրածայր աշտարակների հովվերգական գեղեցկությունն ու հինավուրց ավանդույթները չարագուշակ մի բան են թաքցնում: Նա համոզված է, որ մարդասպանն Էդվարդ Ֆոսկան է, թեև վերջինս հիմնավոր ալիբի ունի: Բայց պրոֆեսորն ինչո՞ւ պիտի թիրախավորեր ուսանողուհու: Եվ ինչո՞ւ է շարունակ վերադառնում կույս Պերսեփոնեի ծեսերին ու Անդրաշխարհի ուղևորությունների թեմային:

Հերթական դին հայտնաբերելուց հետո Ֆոսկայի մեղքն ապացուցելու գործում Մարիանայի սևեռուն գաղափարն ուղղակի անկառավարելի է դառնում՝ սպառնալով հողին հավասարեցնել նրա հեղինակությունն էլ, մտերմագույն հարաբերություններն էլ: Մարիանան վճռում է մարդասպանին խանգարել ամեն կերպ, նույնիսկ սեփական կյանքի գնով:

ՀՏԴ 821.111-312.4 Մայքլիդիս
ԳՄԴ 84(4Մբ)-44

ISBN 978-9939-884-33-2
Alex Michaelides “The Maidens”
Copyright © 2021 by Astramare Limited

Ալեքս Մայքլիդիս «Կույսերը» © 2021, «Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Գրքի թարգմանությունն իրականացվել է Astramare (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) ընկերության հետ կնքված պայմանագրով:

Բովանդակություն

Նախաբան 15
Մաս **առաջին** 17
Մաս **երկրորդ** 129
Մաս **երրորդ** 225
Մաս **չորրորդ** 285
Մաս **հինգերորդ** 387
Մաս **վեցերորդ** 419
Վերջաբան 433
Երախտագիտության խոսք 441

Bookmark

Նվիրում եմ Սոֆի Հանային,
որն ամրապնդեց համոզմունքս։

Bookmark

Պատմի՛ր հեքիաթը առաջին սիրո՝
Գարնան զարթոնքի խենթությամբ լի,
Պատմիր անվարան մինչև Դատաստան,
Մինչև մեռյալները հառնեն ու պար գան:

Ալֆրեդ Լորդ Թենիսոն, *Մեղքի տեսիլքը*[*]

[*] Alfred Lord Tennyson, Ալֆրեդ Լորդ Թենիսոն (1809-92) – վիկտորյան ժամանակաշրջանի ամենաակնառու անգլիացի բանաստեղծներից մեկը, Վիկտորիա թագուհու սիրելի պոետներից, որին շնորհվել է լորդի տիտղոս: «Մեղքի տեսիլքը» գրել է 1842-ին: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

Bookmark

ՆԱԽԱԲԱՆ

Էդվարդ Ֆոսկան մարդասպան էր:

Սա փաստ էր: Մարիանան այդ մասին գիտեր. ընդ որում, ո՛չ ինտելեկտուալ մակարդակում, այլ որպես գաղափար: Նրա մարմինը գիտեր: Ոսկորներով, արյան հոսքի հետ, ամեն բջջի խորությամբ էր զգում:

Էդվարդ Ֆոսկան մեղավոր էր:

Բայց... չէր կարող ապացուցել ու գուցե երբեք էլ չկարողանար: Այս մարդը, այս հրեշը, որ առնվազն երկու մարդու էր սպանել, ամենայն հավանականությամբ, ազատ էր արձակվելու:

Այնքա՜ն ինքնագոհ էր, այնքա՜ն ինքնավստահ: «Կարծում է, թե չբռնվեց, ձեռքից եկավ»,– մտածում էր նա: *Էդվարդը համոզված էր, որ հաղթել է:*

Բայց չէր հաղթել: Դեռ:

Մարիանան որոշել էր նրան գերազանցել խորամանկությամբ: Այլ ելք չուներ:

Ամբողջ գիշեր արթուն նստում ու պատահածն էր հիշում: Նստում էր Քեմբրիջի այս փոքրիկ, մռայլ սենյակում, մտածում էր և ծրագիր մշակում: Անթարթ նայում էր պատին ամրացված էլեկտրական տաքացուցիչի շիկացած ձողին,